ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Լեվել-Էս» ՍՊԸ-ի միջև կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԳՎ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան «13» սեպտեմբեր 2024թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտորի ժ/պ Ա. Գրիգորյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Լեվել-Էս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Պետրոսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, այսուհետ կողմեր, ղեկավարվելով Գնորդի և Վաճառողի միջև 2024թվականի օգոստոսի 6-ին կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԳՎ-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8,5 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պատվիրատուն սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կկատարի Վաճառողից Պայմանագրի ընդհանուր գնի՝ **5 924 850** (հինգ միլիոն ինը հարյուր քսանչորս հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամի մինչև 10 տոկոսի չափով՝ **559 998** (հինգ հարյուր հիսունինը հազար ինը հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի 3.1-ին կետում **5 924 850** (հինգ միլիոն ինը հարյուր քսանչորս հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել **6 484 848** (վեց միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր քառասունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն բառերով:

1.3 Պայմանագրի N 1 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1.1 Հավելվածի:

1.4 Պայմանագրի N 2 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2.1 Հավելվածի:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից, որի գործունեությունը տարածվում է 2024 թվականի օգոստոսի 6-ից ծագած հարաբերությունների վրա:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում այս համաձայնագրի դրույթներին:

3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն համաձայնագրով չնախատեսված այլ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

3.2 Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ հակառակ դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի N 1.1 և N 2.1 Հավելվածները կազմված են 5 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	«Լեվել-Էս» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 128	Ք. Երևան, Դավիթ-Բեկի 106/7,
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
900018001876	Հ/Հ 1570027644940100
ՀՎՀՀ՝ 01503224	ՀՎՀՀ 00430324
	հեռ. 094-457-157
Ռեկտորի ժ/պ՝ _____ Ա. Գրիգորյան	Տնօրեն՝ _____ Ա. Պետրոսյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1.1
«13» սեպտեմբեր 2024թ. կնքված
N 1 Համաձայնագրի
Հավելված N 1
«06» օգոստոսի 2024թ. կնքված
N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԳՎ-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

չ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	Գալարավարագույր (գիշեր-ցերեկ)	Համաձայն N 1 աղյուսակի	քմ	11 780	5 247 990	445.5	Ք. Երևան Նալբանդյան 128	445.5	Ապրանքի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագիրը (իսկ լրացուցիչ գնված ապրանքների համար կնքված համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:
2	Գալարավարագույր	Համաձայն N 2 աղյուսակի	քմ	7 350	1 236 858	168.28	Ք. Երևան Նալբանդյան 128	168.28	

Աղյուսակ 1
Գալարավարագույրը (գիշեր-ցերեկ) բաղկացած է փոշեներկված ալյումինե լիսեռից, կտորից և պտտվող մեխանիզմից: Գալարավարագույրի կտորը երկկողմանի ամրացվում է ալյումինե լիսեռին և մեխանիզմի միջոցով պտտվելով իջնում կամ բարձրանում է՝ հավաքվելով վերևի ալյումինե լիսեռի վրա: Այն ամրացվում է պատին կամ առաստաղին ամրակների միջոցով: Գալարավարագույրի մեխանիզմը ամրանում է լիսեռին և ապահովում է պտտույտների աշխատանքը դեպի վերև կամ ներքև:

Գալարավարագույրը և մեխանիզմը լինեն փակ քիվ (կառնիզ):

Գալարավարագույրի կտորը պատրաստված է պոլիէսթերից, խտությունը առնվազն 115գ/քմ, հաստությունը 0.2-0,4մմ, ներկված և ներծծված է հատուկ բաղադրության նյութերով՝ արևից պաշպանվելու համար: Կրկնակի շերտով: Գլանափաթեթը բաղկացած է ցանցային գործվածքից և հաստ գործվածքից, հորիզոնական հաստ գծերով թափանցիկ և անթափանց զուգահեռվող մասերից, որոնք շղթան քաշելիս հայտնվում են մեկը մյուսի վրա և ապահովում ցանկալի լուսաթափանցելիություն: Նյութը պոլիէսթեր: Նախապես չափագրումը կատարում է մատակարարը: **Տեղադրումով** գույնը արտաքին տեսքը դիզայնը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Գույները կարող են լինել՝ կանաչ (բաց և մուգ), շագանակագույն (բաց և մուգ), մոխրագույն (բաց և մուգ), նարնջագույն (բաց և մուգ), կրեմագույն (բաց և մուգ), կարմիր (բաց և մուգ), կապույտ (բաց և մուգ), կեղտոտ վարդագույն (բաց և մուգ), դեղին (բաց և մուգ), բալագույն, խակի:

Աղյուսակ 2

Գալարավարագույր 100% պոլիէսթեր, խտությունը առնվազն 210գ/քմ, հաստությունը 0,35մմ-ից՝ մեկ ամբողջական կտորից, 90%-ից-100% անլուսաթափանց: Հավաքված ալյումինե խողովակի վրա, ամրացված ալյումինե փակ քիվ /կառնիզ/:

Աքսեսուարները՝ պլաստմասե մեխանիզմ, պլաստմասե շղթա, ալյումինե ծանրոց:

Նախապես չափագրումը կատարում է մատակարարը: **Տեղադրումով,** գույնը, տեսքը, դիզայնը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Գույները կարող են լինել՝ կրեմագույն (բաց և մուգ), խակի, մոխրագույն (առնվազն 4 երանգ), շագանակագույն (առնվազն 3 երանգ), նարնջագույն (բաց և մուգ), կեղտոտ վարդագույն, երկնագույն, մուգ կապույտ, էլեկտրիկ կապույտ, կեղտոտ կապույտ (մավի բլու), կարմիր, կեղտոտ կարմիր, մուգ կանաչ, կեղտոտ կանաչ, բալագույն, դեղին:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 128
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ
900018001876
ՀՎՀՀ՝ 01503224

Ռեկտորի ժ/պ՝ _____ Ա. Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Լեվել-Էս» ՍՊԸ
Ք. Երևան, Դավիթ-Բեկի 106/7,
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570027644940100
ՀՎՀՀ 00430324
հեռ. 094-457-157

Տնօրեն՝ _____ Ս. Պետրոսյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 2.1
«13» սեպտեմբերի 2024թ. կնքված
N 1 Համաձայնագրի
Հավելված N 2
«06» օգոստոսի 2024թ. կնքված
N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԳՎ-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը ՀՀ դրամ
1.	39515420/1	Գալարավարագույր (գիշեր-ցերեկ)								4 770 900	5 247 990	5 247 990	5 247 990	5 247 990	**5 247 990**
2.	39515420/2	Գալարավարագույր								1 153 950	1 236 858	1 236 858	1 236 858	1 236 858	**1 236 858**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 128
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ
900018001876
ՀՎՀՀ՝ 01503224

Ռեկտորի ժ/պ՝ _____ Ա. Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Լեվել-Էս» ՍՊԸ
Ք. Երևան, Դավիթ-Բեկի 106/7,
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570027644940100
ՀՎՀՀ 00430324
հեռ. 094-457-157

Տնօրեն՝ _____ Ս. Պետրոսյան
(ստորագրություն) Կ.Տ